EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատներ թիվ 4396/21 եւ եւս 2-ը.

տե՛ս կից ցանկը)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

14 դեկտեմբերի 2023թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Նիկողոսյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Ֆարիս Վեհաբովիչ [Faris Vehabović]՝ Նախագահ,

Անյա Սիբերտ Ֆուա [Anja Seibert-Fohr],

Աննա Լուիս Բորմանն [Anne Louise Bormann]՝ դատավորներ,

եւ Վիկտորիա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

2023 թվականի նոյեմբերի 23-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն՝ կից ներկայացված աղյուսակում նշված տարբեր ամսաթվերի ընդդեմ Հայաստանի Դատարան ներկայացված գանգատների հիման վրա:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանը (Կառավարություն) ծանուցվել է գանգատների մասին:

ՓԱՍՏԵՐԸ

3. Դիմումատուների ցանկը եւ գանգատների համապատասխան մանրամասները սահմանված են կից ներկայացված աղյուսակում:

4. Դիմումատուները բողոք են ներկայացրել քաղաքացիական գործով վարույթի չափազանց երկար տեւողության առնչությամբ:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ

5. Հաշվի առնելով գանգատների նույնաբովանդակ առարկան՝ Դատարանը նպատակահարմար է գտնում դրանք քննել համատեղ՝ մեկ վճռի շրջանակներում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

6. Դիմումատուները բողոք են ներկայացրել այն մասին, որ տվյալ քաղաքացիական գործով վարույթի տեւողությունը չի համապատասխանել «ողջամիտ ժամկետի» սահմանված պահանջին: Նրանք հիմնվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա:

7. Դատարանը վերահաստատում է, որ վարույթի տեւողության ողջամտությունը պետք է գնահատվի՝ ելնելով գործի հանգամանքներից եւ հաշվի առնելով հետեւյալ չափորոշիչները. գործի բարդությունը, դիմումատուների եւ համապատասխան մարմինների վարքագիծը եւ այն, թե ինչն է վիճարկվում դիմումատուների համար տվյալ վեճի շրջանակներում (տե՛ս Ֆրիդլենդերն ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ], [Frydlender v. France [GC]], թիվ 30979/96, § 43, ՄԻԵԴ 2000-VII):

8. *Ֆիլ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի* [*Fil LLC v. Armenia*] (թիվ 18526/13, 2019 թվականի հունվարի 31) նախադեպային գործում Դատարանն արդեն հայտնաբերել է խախտում այնպիսի հարցերի առնչությամբ, որոնք առկա են սույն գործում:

9. Ուսումնասիրելով իրեն ներկայացված բոլոր նյութերը եւ որոշելով մերժել իրավական պաշտպանության միջոցները չսպառելու մասով Կառավարության առարկությունը (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Ֆիլ ՍՊԸ*-ի գործը, §§ 49-50, *Վասիլյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի [Կոմիտե]* [*Vassilyan and Others v. Armenia* [Committee]], թիվ 20193/15 եւ եւս 2-ը, §§ 7-9, 2022 թվականի հունիսի 23, եւ Լմնցյանը եւ Սլոյանն ընդդեմ Հայաստանի [Կոմիտե] [*Lmntsyan and Sloyan v. Armenia* [Committee]], թիվ 41973/19 եւ 51266/19, § 10, 2023 թվականի փետրվարի 9)՝ Դատարանը չի հայտնաբերել ազգային մակարդակում իրականացված վարույթի ամբողջ տեւողությունը հիմնավորող որեւէ փաստ կամ փաստարկ: Հաշվի առնելով քննվող հարցի վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը համարում է, որ տվյալ գործում վարույթի տեւողությունը չափազանց երկար է եղել եւ չի բավարարել «ողջամիտ ժամկետի» պահանջը:

10. Հետեւաբար սույն բողոքներն ընդունելի են եւ մատնանշում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

11. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը (տե՛ս մասնավորապես վերեւում հիշատակված՝ *Ֆիլ ՍՊԸ-ի գործը,* §§ 62 եւ 65)՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել կից ներկայացված աղյուսակում նշված գումարները:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Որոշում է* միացնել գանգատները.

2. *Հայտարարում է* գանգատներն ընդունելի.

3. *Վճռում է,* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ քաղաքացիական գործով վարույթի չափազանց երկար տեւողության մասով.

4. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուներին վճարի կից աղյուսակում նշված գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2023 թվականի դեկտեմբերի 14-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Վիկտորիա Մարադուդինա՝	Ֆարիս Վեհաբովիչ՝
Քարտուղարի տեղակալի պաշտոնակատար	Նախագահ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն բողոքներ պարունակող գանգատների ցանկը (քաղաքացիական գործով վարույթի չափազանց երկար տեւողություն)

Թիվ	**Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը**	**Դիմումատուի անունը Ծննդյան տարեթիվը**	**Ներկայացուցչի անունը եւ գտնվելու վայրը**	**Վարույթն սկսելու ամսաթիվը**	**Վարույթն ավարտելու ամսաթիվը**	**Ընդհանուր տեւողությունը Դատարանի ատյանները**	**Դիմումատուներից յուրաքանչյուրին ոչ նյութական վնասի դիմաց շնորհվող գումարը (եվրոյով)[1]**	**Յուրաքանչյուր գանգատի դիմաց ծախսերի եւ ծախքերի համար տրվող գումարը (եվրոյով)[2]**
1.	4396/21 9 հունվարի 2021թ.	**ԳՈՌ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ** 1968	Սիմոնյան Լիպարիտ Երեւան	19 դեկտեմբերի 2011թ.	5 օգոստոսի 2020թ.	8 տարի եւ 7 ամիս եւ 18 օր դատարանի 3 ատյաններ	1,800	250
2.	12858/21 25 փետրվարի 2021թ.	**Ստելլա ԻՍԱՅԱՆ** 1958	Սիմոնյան Մարիամ Վանաձոր	28 դեկտեմբերի 2016թ.	26 հոկտեմբերի 2022թ.	5 տարի եւ 9 ամիս եւ 29 օր դատարանի 2 ատյաններ	1,500	250
3.	22844/22 28 ապրիլի 2022թ.	**<u>Ընտանիքի անդամներ</u>** **Մարգո ՄԱՐԳԱՐՅԱՆ** 1937 **Ինգա ԳԵՈՐԳԱՁԵ** 1972	Խուրշուդյան Տիգրան Երեւան	8 հունվարի 2014թ.	29 սեպտեմբերի 2021թ. Վերջնական որոշումը դիմումատուներին տրամադրվել է 2021 թվականի հոկտեմբերի 30-ին:	7 տարի եւ 8 ամիս եւ 22 օր դատարանի 3 ատյաններ	1,200	250

[1] Գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ:
[2] Գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ: